



ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мелкъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Խօշիվանքի գերեզմանատան եկեղեցում,
ժամը 11-ին կը կատարվի պատարագ, որից յետոյ, ժամը 12¹/₂-ին, կը կայանայ հանգուցեալ

ԲԱՅՑԻԻ

գերեզմանի վրա հողեմանդիստ և նրա մահարձանի բացումը:

1—3

Դարիս Զաքարեան, Եղիսարէի Սարգսեան և Գրիգոր Յովհաննիս-
եան Միրզոյեանցները, իշխան Նիկողայոս Վասիլեան և իշխանուհի
Մարիամ Յովհաննիսեան Ներկայաբաղուկ-Արդուի թաները, սրտի
ցաւով յայտնում են աղաքականներին և ծանօթներին՝ առաջնորդ որդու, երկրորդը՝ ամուսնու,
երրորդը և հինգերորդը եղբոր, իսկ չորրորդը աներոջ որդու:

ՄԵԼԿՈՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆ ՑԻ

մահը: Ամբողջները լինում են ամեն օր, երեկոյան ժամի 6-ին, Օրթոդոքսի սեփական
տան մէջ: Յուդարկաւորութիւնը լինելու է հինգշաբթի, սեպտեմբերի 24-ին, դէպի Վան-
քի մայր-եկեղեցին, առաւօտեան ժամի 9-ին: Թաղումը կը լինի Թէլէթի գիւղի տոհմա-
կան դամբարանում:

2—3

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Վատ օրինակ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաֆ-
ֆին գերեզմանի վրա արձան կանգնեցնելու հա-
մար ընտրված յանձնաժողովից. Կոմս Լեօ Տը-
ստօյի եօթնամեամեակը. Անդրեանի անկարգու-
թիւնները գործը. Ներսիսեանի հիմնադրու-
թիւնները. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՐԻՆ
—ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ամերիկական նախաձեռնութիւն.
Արտաքին լուրեր. ԽԱՆԻ ԼՈՒԻՍ.—ԲՈՐՍԱ.
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱՎԱՆ. Գեղըկուհին:

ՎԱՏ ՕՐԻՆԱԿ

Ի՞նչ օգուտ, եթէ անհատները անգիր
կանեն բարոյականութեան սկզբունքները,
իսկ ազգերը ամեն օր հրապարակ կը հա-
նեն այդ սկզբունքները ոչնչացնող խոշոր,
համաշխարհային գործեր: Նայելով ժամա-
նակից անցքերին, ակամայ գալիս էք այն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԵՂՁԿՈՒՀԻՆ

(Գիւղական պատկեր)

Գեղեցիկ էր Սօման: Ով տեսնէր նրա թուի
ու մեծ-մեծ աչքերը, ճկուն իրանն ու հորհալի
գնացքը՝ կը սիրահարվէր: Նրա սև սաթի պէս
մաշկը մինչև գոտկանդն էին հասնում: Նա
տանն և վեց տարեկան էր, մօրից գրկված.
Նրա հայրը՝ ծերունի Կարապետը, աչքի լոյսի
պէս էր սիրում նրան՝ իր միջուկաւ գաւազին:
Գիւղի երիտասարդներէն չէր կար մէկը, որ նրա
վրա աչք չունենար, բայց հայրը միշտ կրկնում
էր, թէ իր աղջկանը պէտք է «բեկկալի» տալ:
Հարս ու աղջկեքը նախանձում էին նրա գեղեց-
կութեանը և երբ տեսնում էին Սօմայի լուսնի
պէս գեղեցիկ դէմքը, սկսում էին հազար ու մի
անվայել խօսքեր ուղղել նրան՝ իրանց մէջ, թէ
ինչու այդ հասակի աղջիկը երեսը կիսով չափ
բաց է պահում. իսկ Սօման ամենքի հետ խօ-
սում, ամենքի հետ ծիծաղում էր՝ բոլորովին
միամիտ: Սօմայի վրա ամենից շատ աչք էր
գցել Մուսա-քեօվիլի որդի Սարգիսը. նա ամեն
կերպ աշխատում էր դուր գալ նրան: Հէնց որ
Սօման առաւօտեան կամ իրիկիաւթմին գնում
էր աղբիւր, Սարգիսը հեծնում էր ձին, խաւ-
չալը կապում, փափախել ծուռ դնում ու ձին
տանում ջուր տալու: Գիւղի հարս ու աղջկեքը,
երբ տեսնում էին նրան ձի քշելիս, իսկոյն Սօ-
մային էին ակնարկում...

Գարգառ գետի աջ ափին բարձրանում է մի
բարձրաւանդակ, որ հարաւային կողմից միա-
նում է Գարաբաղի լեռների հետ: Այդ բարձրա-
ւանդակի վրա գտնվում է Ք... գիւղը: Այդ
գիւղիցն էր Սօման: Լեռնադաշտը, որի վրա

եղբակցութեան, որ մարդը իբրեւ մասնա-
ւոր անհատ պարտաւորական պիտի հա-
մարէ այն բոլոր գաղափարները, որոնք
դարձրել սկզբնից բարոյական են իբրեւ սրբու-
թիւն. բայց իբրեւ մասնա, իբրեւ հաւաքա-
կան մի կազմակերպութիւն, որ կրում է
ազգ, ժողովուրդ անունները, այդ նոյն
մարդը պիտի ներել և ցանկալի համարէ
ամեն մի վատ բան, որ դատապարտված է
մասնաւոր, անհատական կեանքում: Իբրեւ
մի հատ անձնաւորութիւն՝ մարդը, օրի-
նակ, չը պիտի խաբէ, չը պիտի լինի եսա-
մուր, պարտաւոր է իր թշնամու վերաբեր-
մամբ էլ լինել անկեղծ, ազնիւ: Բայց երբ
այդպիսի պարտաւորութիւնների տակ գըտ-
նվող մարդիկ գործում են իբրեւ քաղաքա-
կան մարմին, իբրեւ ազգութիւն, այն ժա-
մանակ նրանք կարող են թէ՛ խաբել, թէ՛

ձգված է Ք... գիւղը, հիանալի գիւղը ունի. նա
չորս կողմից պատած է անտառով, որը, սա-
կայն, չի խանգարում դիտողին տեսնել Գարա-
բաղի ամբողջ բարձրաւանդակը: Բազմաթիւ լեռ-
նային հանգուցներ, որոնք կտրտված են խոր-
խոր ձորերով ու մութ անտառներով՝ հեռուից
իրանց սև գոյնով վեհ տպաւորութիւն են թող-
նում դիտողի վրա: Առաւօտեան ձգվին՝ արե-
գակի առաջին ճառագայթները տակ՝ Կուրն է
պսպում արծաթագոյն, իսկ պարզ լուսնակայ
գիւղերը, լուսնիւր, կարծես, Կուրի միջինն է ծա-
ղում: Հեռու արևելքում օդի խիտ շերտերի մի-
ջինց նկատվում են Կովկասի ձիւնապատ բարձ-
րաբերդ գագաթները, հիւսիսում Մուսի սպի-
տակ դուրը, հարաւում հորիզոնը կորչում է
օդային անսահմանութեան մէջ, իսկ արևմուտ-
քում նոյն լեռներն ու ձորերն են սևին տալիս:
Գիւղի ստորոտում Գարգառն է իր օձապտոյտ
հոտանքով արևելքը ընդունող գետի ծով, բայց ու-
ժից ընկնելով մնում է կէս-ձանապարհին, ժո-
ղովում նոր արկները, նոր ուժով նրանց մղում,
նոր կուր սկսում, բայց միշտ յաղթանակով...»

Ք...գիւղից գետի հարաւ-արևելք, երկու վերստ
հեռաւորութեան վրա՝ նոյն բարձրաւանդակի
ստորոտում տարածված է Ն...գիւղը: Այդտեղ
գոյութիւն ունի հայոց մեղքների մնացորդներից
մի ցեղ, որի անդամները բեկի են կոչվում:
Ն...գիւղը Ք...գիւղից բաժանված է մի խիտ,
անառնանի, կուսական անտառով: Հինգրեւս
է այդ անտառը: «Նոյն-Պալա» է նրա անու-
նը: Գիւղացիները պատմում են, որ այդտեղ եր-
բման գիւղ է եղել, բայց Արքա-Միւրի արշա-
ւանդների ժամանակ երբ թուրքերը նեղեցին
հայերին, վերջինները, իրանց աւանդական տո-
վորութեամբ, բարձրացան լեռները և շինեցին
Ք...գիւղը: Իսկ «Նոյն-Պալա» կոչվելու պատ-
ճառն էլ այն է, որ այդ անտառի ամենախոր
տեղում, փշերի ու մացառների մէջ, գետ ևս

*) Գարգառը ծովը չէ հասնում, նա կէս ձանապար-
հին կընջւմ է աւաղի տակ:

կեղծել ամենաստոր կերպով, թէ՛ շահա-
գործել ամեն մի անազնիւ, զգուշել միջոց:
Նախաւորութիւնն անհատի համար մի շատ
զգուշելի ակտ է, իսկ մի ազգի համար—
գեղեցիկ, ցանկալի յատկութիւն: Այսպէս
է սովորեցնում ժամանակակից կեանքը,
այսպիսի երկսայրի, միմեանց ոչնչացնող
պարտաւորութիւններով է բռնաւորում
մարդուն ժամանակակից քաղաքակրթու-
թիւնը:

Իբրեւ մի օրինակ: Գերմանական լրագրի-
ները ջերմապէս ողջունեցին Բրիտանիան, որ
կարողացաւ մի հերոսական քայլ անել և
պաշտպանել արդարադատութիւնը, իրա-
ւունքը զինուորական բռնուցքից: Եւ ահա՛
լրագրութիւնը, որ հասարակական բարեքե-
րի հսկողն է համարվում, սկսում է շնչալ-
իր ընթերցողների ականջին. «Մի՛ հաւա-
տաք, գերմանացիները մեր թշնամիներն
են, ուստի ինչ որ ասում են, զուր պիտի
հակառակը հասկանաք»: Եւ հաւատում են
այդ շնչալիրներին: Ինչու: Որովհետեւ Ֆրան-
սիան էլ Գերմանիայի վերաբերմամբ է այդ-
պէս, որովհետեւ ազգերի յարաբերութիւն-
ների մէջ անկեղծութեան, ճշմարտութեան
նշոյլները միշտ բացակայում են և հակադա-
կան փաստերը ամեն օր լոյս են գալիս ա-
պացուցանելու, թէ համաշխարհային, հը-
րապարակական գործերի մէջ թշուարոված
է ամեն մի տգեղ, զգուշել արարք: Մի-
թէ բաւական չէ այն, որ Կրետէի վրա
բրիտանականների արկներ թափվելու հետ
միասին բարձրանում և պողոտներ է տա-
լիս այն լուրը, թէ դա Գերմանիայի գործն
է: Դա, անհասկած, հրէշաւոր մեղադրու-
թիւն է. բայց ասացէք, կա՞ն ձեր ձեռքին
փաստեր, որոնք դրականապէս ապացուցա-
նեն, թէ միջազգային յարաբերութիւնների
մէջ այդ տեսակ հրէշաւոր գործեր տեղի
ունենալ չեն կարող...

Եւ սակայն այն՝ ինչ անում են ազգերը,

երևում են հին եկեղեցու աւերակները՝ որմե-
րը: Եկեղեցու մօտ կայ մի սառն ու յորդ աղ-
բուր: Նախապաշարված գիւղացիները անմեղա-
նայի են համարում այդ կուսական անտառը:
Յուրա ու խնամ ու անտառի խորքը երկինքը
հազել է նկատվում հաստաբուն ծառերի գրկա-
խառնված կատարների միջից: Այն տեղը, ուր
հաւանականաբար սեղանն է եղել, այժմ բուսել
է մի մեծ ուռենի, որը՝ ոտները կախ գցած,
կարծես, ողորմ է ժողովրդի անցած-գնացած
յիշատակարանների մնացորդների վրա:

Տխուր տպաւորութիւն է թողնում այդտեղ
ուղեւորի վրա...

Աղանը Ն...գիւղի մեղքների ցեղիցն էր:
Նա հօր մահից յետոյ ծառանդել էր մեծ կա-
լաւանք և միամօր դաւակ լինելով՝ բոլորին
էլ ինքն էր տիրապետում: Փսան տարեկան էր,
առողջ, բարձրահասակ ու գեղեցիկ. որս գնալ,
ձի հեծնել՝ նրա սիրած բաներն էին: Բնութիւ-
նից ըստ լինելով՝ նա իւրաքանչէր էր այն բոլոր
յատկութիւնները, որոնք հարկաւոր են անվեհեր
որսորդին և յանդուգն ձի հեծնողին: Նրա գոյն-
ըզգոյն նոյնները գտնված էին չրվակայ գիւ-
ղերում: Երբ ոսկեգոյն թիկերով զարդարված,
երկար չուխան հագնի, փղբրիկ զգալը ծուռ
դրած, սպիտակ նոյնը մորակեղծ Աղանը
անցնում էր գիւղի միջով, բոլորը հիացած նը-
րան էին նայում ու երանի տալիս նրա ծնողին:
Շատ տեղերից էր առաջարկութիւններ եղել,
շատ աղետակներ էին ցանկանում Աղանին
փեսայ ունենալ, կալաւանք էին խոստանում,
բայց նա չէր համաձայնվում ամուսնանալու:
Նրա ծնողի ազգականները նախանձով էին նա-
յում նրան:

Մայիսեան օրերից մէկն էր: Արեւ քիչ բարձ-
րացել էր. ամեն տեղ կենդանութիւն էր տի-
րում. գիւղացիներն շտապում էին արտերն ու
այգիները. գիւղերում աշխատանքի օրերը հասել
էին: Աղանը հրացանն ուսին չրչում էր մօտա-

օրինակ է դառնում անհատների համար:
Բարոյականութիւնը անհատի և մասնայի
մէջ խորութիւն չէ դնում, նա պայմանա-
կան չէ. ընդհանրապէս, անհատը կարող է
չեղել, մոռանալ իր պարտաւորութիւննե-
րը, բայց անհատների ահալին համարված
բռնուր, նրանց խղճի, հաւաքական հասա-
ցողութեան համաշխարհային արտայայ-
տութիւնները պիտի կրեն անշեղ, արդար
սկզբունքների գործը: Մենք տեսնում ենք
հակառակը: Բայց էլ ո՞ւր որոնել մարդ-
կային մաքուր, ազնիւ գործեր, երբ լայն-
արձակ աշխարհը այդքան մոլորեցնող է,
այդքան ապականող:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՅՑԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱ ԱՐՁԱՆ ԿԱՆԳԻՆԵ-
ՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎԻՑ

1888 թվ. ապրիլի 24-ին վախճանվեց Բաֆ-
ֆին: Յանձնաժողովը, որ ընտրվեց անմիջապէս
հանգուցեալ վրաստանի մահից յետոյ նրա յար-
գողների չրվածում, սկսեց իր գործունէութիւնը՝
ընդհանուր ստորագրութիւն բանալով. սակայն
ստորագրութիւնը, որ սկզբում բաւական աղող
գնաց, 1888 թվ. դեկտեմբերի 21-ին ընդհա-
ղեց ու արտահանեց Յանձնաժողովը ոչ մի կօ-
պէկ չէ ստացել: Ստորագրութիւն ամբողջ
արգիւնէն էր 1019 թ. 31-ը, որից մի քանի
մանր ծախսեր դուրս եկած (48 թ. 5 կ.) մնաց
առ. 1-ն փետրվարի 1889 թվ. 971 թ. 26 կօպէկ:

Յանձնաժողովը իրան նպատակ էր դրել Բաֆ-
ֆին գերեզմանի վրա կառուցանել՝ անմահ վի-
պատանի անուան վայել փառաւոր անհաճան.
Յանձնաժողովին չէր վառեցնում նաւաքած ան-
նշան՝ 971 թ. դուստրը, բայց սրբան էլ աշ-
խատեցին, բոլորն ի դուր. շատ տեղեր և շատ
անձանց ենք դիմել, բայց ապարդիւն... Այդ ա-
նաջողութիւնը մեզ մնում էր բացատրել վերջին
տասը տարվայ ընթացքում հայերի մէջ տեղի

կայ անտառի մէջ: Ք... գիւղի հարսերն ու աղ-
ջկեքը նոյն անտառի չրվակայքում կանաչեղէն
էին ժողովում. դրանց մէջ էր և Սօման, որ իր
ընկերակցներից քիչ հեռու, մի թիփ մօտ նրա-
տած կանաչեղէն էր ջուղկոյն: Նա լսեց ծա-
ռերի խշխշոց. յետ նայեց ու քիչ հեռու տեսաւ
Աղանին, տեսնելուն պէս գլխի կարմիր «չա-
ղալ» քաշեց ու կիսով չափ ծածկեց դէմքը:
Աղանը տեսնելով այդ լեռնային գեղեցիկուհուն՝
մնաց հիացած: Քիչ յետոյ նա ժպտալով մօ-
տեցաւ:

—Քոյրիկ, հրեղեղացի ես:

—Ք... գիւղացի եմ, պատասխանեց Սօման
ցած ձայնով:

—Ո՞ւր աղջկին ես:

—Սարկազմեց Կարապետի:

—Հա... Կարապետ-ապօր աղջկին ես, որ
Ն. Գիւղի վերեւում բաղ ունի:

—Այո:

—Անուշաղ ինչ է:

—Սօմա, ամաչելով պատասխանեց նա:

Աղանը հիանում էր նրա գեղատեսիլ դէմքով,
որ կիսով չափ երևում էր կարմիր չաղաթի
տակից: Նա աշխատում էր խօսակցութիւնը շա-
րունակել, բայց նիւթ չէր գտնում: Բօլեական
լուսնիկից յետոյ հարցրեց.

—Ինչու ես եկել այստեղ:

—Եկել եմ կանաչեղէն քաղելու, պատաս-
խանեց Սօման ժպտալով:

Աղանն ինքն էլ նկատեց իր հարցի անտեղի
լինելն ու քիչ շփոթեց. բայց տեսնելով, որ Սօ-
մայի ընկերակցները հետաքրքրութիւնից մօտե-
նում են, փափախել աչքերին քաշեց ու հեռացաւ
անտառի խորքը:

Աղանը՝ անտառի խորքը քաշվելով, նստեց
փղբրիկ աղբիւրի մօտ ու խոր մտածմունքի մէջ
լնկաւ:

Անտառում գոլ էր. մեղմ քամին խշխա-
ցում էր ծառերի տերևները. հազարաւոր եր-
գեցիկ թռչուններ ու գետնուներ ձայները միա-

ունեցած աղէտներով մի հասարակութեան մէջ, որոնք անընդհատ տրուում էր իրար ետեւից սով- խօրեալ, գաղթականութիւնից առաջացած բարդ պահանջներ, ի հարկէ, դժուար էր նոյն իսկ Բաքիի մահաբաժնի համար նուէրներ սպասել...

Յանձնաժողովը իր ժամանակին նոյնպէս յայ- տարարեց մրցանակաբաշխութիւն մահաբաժնի նախագծի համար: Նշանակած ժամանակին ստացվելից պրօէկտներ, որոնցից միմայն մկը ճանաչվեց համեմատաբար ամենաաշուոյ, որի հեղինակին՝ Արշակ Սալամբեգեանին ուղարկ- վեց երկրորդ մրցանակ—100 ռ. (76 կ. պատի ծախս), սակայն նախ վերջին պրօէկտն էս չէր համապատասխանում լիովին Յանձնաժողովի ծը- րագրած պահանջներին և երկրորդ՝ այդ պրօէկ- տը իրագործելու համար հարկաւոր էր մի գու- մար, որ չունէր Յանձնաժողովը: Վերջինիս մը- նում էր—տարինքով սպասել, որպէս զի իր ձեռքին եղած գումարին՝ 870 ռ. 50 կ. (971 ռ. 26 կ.—100 ռ. 76 կ.) աւելանային տոկոսներ և գոյնար գտնէ այնչափ, որ հնարաւոր լինէր մի համեմատ մահաբաժնի կանգնեցնել հայ հասա- րակութեան պաշտած վիպասանին: Եւ իրաւ՝ այս տարվայ փետրվարի 1-ին այդ 870 ռ. գումարին աւելացնելով ինն տարվայ տոկոսները, ստացած սկզբում Քիֆիսի Առե- տրական բանկից, ապա Քիֆիսի Կրէդիտային բանկի հազար ռուբլիանոց օրվադրայից, այն է՝ 465 ռ. 37 կ., մայր գումարի հետ ի միասին կազմվեց 1335 ռուբլի 87 կոպէկ:

Յանձնաժողովը կը շարունակէր սպասել, եթէ ժամանակը ներքը, մահվան տանտամեակին ար- դէն ժամանակ էր կառուցանել այն, ինչ հնա- րաւոր էր՝ եղած միջոցներով: Մեր ընկերակից անդամ՝ նկարիչ Բաշինջադեան օգնութեան հա- սու և իր չնորսալի նախադիման առաջարկելով, Յանձնաժողովին հանց նեղ դրութիւնը: Յանձ- նաժողովը միանգամայն համաձայնութիւն տվեց յի- չեալ նախագծին, չնորսակալութեամբ ընդունե- լով այդ նուէրը, յանձնարարեց իր անդամներին՝ Գ. Միրզոյեանին և Գ. Բաշինջադեանին ի կա- տար անել այդ նախագիծը:

Այսօր մահաբաժնին արդէն պատրաստ է. մօտ եօթն արշին բարձրութիւն ունեցող մարմարեայ սիւնը, զարդարված հայկական օրնամաններով գրաւում է իւրաքանչիւրի ուշադրութիւնը: Մա- հաբաժնի պատրաստ է յայտնի վարպետ Ան- դրիօլէտի, որին վճարված է 1200 ռ. և վան- դակապատի տակի քարերի համար վճարված է քարտաշ Գասպար Յարութլեանին 135 ռուբլի: Հայ հասարակութեանը միտ է աւարտել գոր- ծը, չինքն տալով գտնէ լինել վանդակապատ, որի վրա կը ծախվի մօտաւորապէս 400 ռուբլի: Թէ և իր ժամանակին մենք տպել էինք հայոց

խառնելով անտուր երաժշտութիւն էին կազ- մել: Այսօր յանկարծ նկատեց մի զոյգ աղաւ- նի, որոնք իրանից քիչ հեռու թիփ տակին ու- տոտում էին. արուն անդադար ցատկում էր կանգնում իր սիրուն առաջ ու գլուխը հպարտ- հպարտ բարձրացրած՝ ցոյց էր տալիս իր խա- տարեղ և կոթերը: Միւս կողմը նայեց. տեսաւ երկու նապաստակ, որոնք ոտոտում էին, ի- րար դրվում ու գլորվում կանաչ թաւեայ խո- տերի մէջ: Ամենքն էլ ընկեր ունէին, ամենքն էլ ուրախանում էին. միայն ինքն էր մենակ ու տխուր...

—Ամենքն ընկեր ունեն, իսկ ես ինչու եմ մե- նակ, մտածում էր Ալանը. բայց ով կը լինի իմ ընկերս—Սօնան, չնայած մի ներքին ձայն և նա յանկարծ մի ներքին ցնցում զգաց... Նա սթափվեց իր մտածածքներից, վեր կացաւ, վերցրեց հրացանը, լուս, թխաձալից դէմքով ու- ղարկեց դէպի տուն: Նա ճանապարհին ոչ մի բանի վրա ուշադրութիւն չէր դարձնում, և մինչ- ին անգամ չը նկատեց էլ, որ ճանապարհից չեղ- վել, ընկել է մայրուների մէջ և գնում է դի- ւղից հեռու: Կէսօրից շատ անց էր, երբ Ալանը տուն դարձաւ:

Ալանին հեռանալուց յետոյ Մուսա-բեօլի ուրիշ Սարգիսը, անցնելու ժամանակ, տեսնելով որ Սօնան քէչ հեռու է ընկերութիւններից, յար- մար ժամանակ համարեց իր ցանկութիւնը յայտ- նելու և մօտենալով հարցրեց.

—Սօնա, ինչու ես մենակ. չը լինի թէ մէկին սպասում ես:

—Ո՛ւմ պէտք է սպասեմ, ասաց Սօնան ու պատրաստվեց վեր կենալու:

—Լսի՛ր, Սօնա, եթէ քեզ ուզեմ, կը գնա ինձ, կցկոտրեմ ձայնով հարցրեց Սարգիսը:

—Զէ, հեռացի՛ր գլխիցս. ինչ ես տակից-գլխից խօսում, պատասխանեց Սօնան կարմրելով ու շտապով գնաց ընկերութիւնների մօտ, որոնք պատ- րաստվել էին տուն գնալու, բայց տեսնելով Սարգիսին, իրար փոփախով գուշակութիւններ է- ին անում ու սպասում Սօնային, որն ուշադրու-

լրագրեւորում մեզ հասած բոլոր գումարների հաշիւը, այնու ամենայնիւ աւելորդ չենք համա- րում այսօր կրկնելու: Նոյնը: 1888 թ. եղբայրը Աբէլեաններից 10 ռ., «Արձագանք» միջոցով 1) Յարիսինի հայերից՝ 43 ռ. (№ 21), 2) Կու- կիայի Քանդայեան ծխական դպրոցի ուսուցիչ- ներից՝ 12 ռ. (№ 21), 3) Գորուց՝ 13 ռ. 60 կ. (№ 24), 4) Պետերբուրգից պ. Քր. Բաշինջա- դեանի միջոցով՝ 50 ռ. (№ 27), 5) Ասիաբա- դից՝ 30 ռ. (№ 50), Նոր-Նախիջևանից պ. Սու- Տէր-Կարապետեանից՝ 10 ռ., Նոր-Բայազետից պ. Յ. Մամիկոնեանի միջոցով՝ 26 ռ. 33 կ. Մերվից պ. Շիրվանդադի միջոցով՝ 33 ռ. (նոյն № 27), Մարտէլից պ. Էլուրեանի միջո- ցով՝ 18 ռ. 88 կ., Աստրախանից սրբազան Գէորգ եպիսկոպոս Սուրենեանի միջոցով՝ 107 ռուբլի. Եւսեր-Գարի միջոցով՝ 1) Գորուց՝ 6 ռ. 2) Նոր-Նախիջևանից՝ 19 ռ. (նաև 19 ռ., զոր- բերի հրատարակութեան համար), Մոսկվայից պ. Փամհարեանի միջոցով՝ 563 ռ. 50 կ., Աղ- դաշից պ. Սղասարեանի միջոցով՝ 12 ռ., Վե- րին-Աղուլիսից պ. Ս. Հաննադարեանի միջո- ցով՝ 57 ռ., Պետերբուրգից Արեստակեսեանից՝ 3 ռ., և այլի Բաքիի միջոցով՝ Աղ. Բաղդա- սարեանից՝ 5 ռ., ընդամենը 1019 ռ. 31 կ.: Մասնա ժամանակաւոր վանդակապատ 30 ռ., նամակներ տպելու, հեռագրերի, 71 հատ փօստի մարկայի և այլն 18 ռ. 5 կ., Արշակ Սալամբեգեանին մրցանակ փոխալին ծախսով 100 ռ., 76 կ., ընդամենը 148 ռ. 81 կ.: Մուսայի ծախս հանած՝ 1019 ռ. 31 կ.— 148 ռ. 81 կ.—870 ռ. 50 կ.: Վերջին գու- մարին աւելացրած %—465 ռ. 37 կ., գո- յալաւ 1335 ռ. 87 կ., որ լիովին ծախսած է: Դժուար է հաստատել, բայց փաստ է, որ Քիֆիսի, Բագու (բայց եղբ. Սրէնաներից), Նրեան, Ալեքսանդրօպոլ, Սիսայիս, Գանձա- ու ձ մի կօպէկ չեն նուիրել Բաքիի մահաբ- ձանի համար...

Յանձնաժողովը դիմաց՝ Գարիէլ Միրզոյեան

ԿՈՍՍ ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ ԵՅՈՒՆԱՍՏՈՒՄԱՆԱԿԸ

I Անցեալ օգոստոսի 28-ին լրացաւ ուսու հրո- չակաւոր գրող Կոստ Լեւ Նիկոլաւիչ Տոլստոյի ծննդեան եօթնամեակը: Համաշխարհային գրականութեան մէջ աննկատելի չը մնաց այդ յօբեկանը. արտասանմանի և ուսուց լրագրե- ները բազմաթիւ յօդուաններ նուիրեցին եօթն- նամեակեայ ժր և առողջ տաղանդին, որ համ- աշխարհային հոգի է վայելում և որի փառքին, ինչպէս իրաւացի նկատում է մի անկողմնապահ ուսու լրագիր, չէ համարում ժամանակակից կեն-

թիւն չը դարձնելով Սարգիս ինքնուր նայեաց- քին՝ շտապ-շտապ հեռանում էր:

Սարգիսը մնաց սառած. նա Սօնայից այդպի- սի բան չէր սպասում. նա կարծում էր, թէ Սօ- նան իրան սիրում էր. այժմ բարկութիւնից ծա- քում էր. ոտներն ու ձեռները դողում էին. նա այլ ձեռքով այնպէս պինդ սեղմել էր խանդալի կրթը, որ, կարծես, այդ բոպէին մէկին պէտք է կտոր-կտոր անէր:

—Լսա, ասաց նա, աչքերից բարկութեան կայ- ծեր թափելով, և հեռացաւ:

Անցաւ մի շաբաթ: Լուր տարածվեց, որ Աս- լանը նշանվել է Ք. գիւղացի ծերունի Կարապե- տի աղջկի Սօնայի հետ: Ծառերը զարմանում ու մինչև անգամ չէին հաւատում, որովհետեւ դի- տին, որ Ալանին շատ բարձր տեղերից են աղջկի առաջարկել, բայց նա չէ հաւանել: Աս- կայն լուրը ձիւջ էր. Ալանը նշանվել էր: Ու- րախ էր ծերունի Կարապետը. վերջապէս իր ցանկութիւնը կատարվեց՝ իր միտմամբ դաւա- կին իր ցանկացած տեղը տվեց: Ալանի պէս քաջ, հարուստ ու անուանի փեսայ ունէր. նրա ուրախութեանը չափ ու սահման չը կար: Ուրախ էր և Սօնան, մանաւանդ որ կազմովի գիւղա- ցիներ լայնահայութիւններից ու Սարգիս զոյգ- վել խօսակցութիւններից. այժմ կար մէկը, որ կը պաշտպանէր այդ բոլորից: Ալանը նրա սրտի ցանկացածն էր. ամբողջ սրտով նրան սիրում էր: Նա՛մ, միւս նշանված աղջկիկների նման չէր փախչում իր փեսայից, այլ Ալանի և Տօր համա- ձայնութեամբ՝ նրա հետ խօսում, նրա հետ պա- տանում էր...

Գիւղական բազմաստիքութիւնը էլ չինձու պատմութիւնների ըր թողեց, որ չը յօրինէր: Պատաւ կանայք սպասում էին, որ Աստուած վաղ թէ ոչ կը պատժէ այդ երկու լիտիներին: Գիւղացիներից շատերը նոյն իսկ սաստիկ զոր- դեղում էին ծերունի Կարապետի դէմ, որ նա մոռանում է հայրերի սովորութիւնը, ոտնատակ է տալիս նախնեաց աւանդութիւններն ու վատ

դանի վիպագրողներից ոչ մէկը: Բոլոր քաղաքա- կրթված աղջերի գրականութեան մէջ Տօլստոյ յարգված, պատկառելի հեղինակ է: Պարտք ենք համարում մի համառօտ տեսութեան մէջ ծանօ- թեցնել մեր ընթերցողներին այն հակայի հետ, որը հիացմունք է պատճառում աշխարհի բոլոր կողմերում:

Տօլստոյ ուսու հին աղնականներից է ծագում և ծնվել է 1828 թ. օգոստոսի 28-ին: Փոքր հասակում նա զրկվեց ծնողներից և գտնվում էր իր աղականների խնամակալութեան տակ: 1840-ական թվականներին նա ապրում էր հօ- րաբնոյ մօտ, Կազանում: Այդտեղ երիտասարդ Տօլստոյ նուիրված էր բարձր դասակարգին յա- տուկ գուարճութիւններին և այդ պատճառով առանձին առաջադիմութիւն չէր ցոյց տալիս ուսման մէջ: Նա մտաւ Կազանի համալսարանի արեւելեան ֆակուլտետը և դրա համար ուսում- նասիրեց արաբերէն և թիւրքերէն լեզուները: Համալսարանին այդ ժամանակ ողբալի դրու- թեան մէջ էր գտնվում. ուսումնական մասը յանձնված էր գերմանացի պրօֆէսորներին, ո- ռնցից շատերը նոյն իսկ ուսուցիչն չը գիտէին: Միակ բաժանմունքը, որ իսկապէս գիտութիւն էր աւանդվում, արեւելեան ֆակուլտետն էր: Բայց Տօլստոյ չը կարողացաւ բաւարարութիւն տալ այդ բաժնի պահանջներին և ստիպված ե- դաւ անցնել իրաւաբանական բաժնի. սակայն այդտեղ էլ չը վերջացրեց և հեռացաւ Կազանից, զոյգված համալսարանի և այն ժամանակվայ հա- սարակութեան դրութիւնից: Նա ընակվեց Նաս- նայեան Պոլեանա անունով իր տոնմային կալուած- քում, որ այնպիսի մեծ հոգի ստացաւ իր տա- դանաւոր տիրոջ շնորհիւ: Դեռ այդ ժամանակ- ներում Տօլստոյ զգաց, որ պէտք է դործել ժո- ղովորի մէջ և ժողովրդի համար: Նա փոր- ձեց ընդունել տալ Պետերբուրգի համալսարա- նում, բայց չը վերջացրեց: Ու գործունէու- թեան ծարաւ երիտասարդը գնաց իր եղբօր մօտ, որ մասնակցում էր Գաղստանի պատե- րազմում, ինքն էլ կամաւոր գրվեց, երկարվեց պատերազմին փախչողներին: Ինչպէս ուսու շատ գրողներ, Տօլստոյն էլ Կովկասեան լեռների ա- հաւոր գեղեցկութիւնից և Կովկասեան կենքի տեսարաններից յափտակված, ձեռքը գրիչ ա- ռաւ և մի քանի հիանալի պատկերներ գրեց այդ կենտրոնից: Սակայն զորքը, որ հոգիների երիտա- սարդ գրողին, «Մանկութիւն» անունով տա- րանդաւոր գրուածքն է, որի մէջ նա սքան- չելի պարզութեամբ նկարագրում է առտին կենսաւ. այդտեղ կան բազմաթիւ ինքնակենսա- գրական նիւթեր. Տօլստոյ նկարագրել է իրան և իր շրջապատողներին: Արի մի պատերազմի ժա- մանակ Տօլստոյ գնաց Սեւաստոպոլ և մտաւ

օրինակ է դառնում միւսներին. չէ որ իրանց որ- դիքն էլ կարող են այդպէս անել, այն ժամանակ Աստուած կը բարկանայ, մի կտոր հաւը հացը կը հարամի, երկրից պատիժներ ու պատու- հաններ կը դան իրանց վրա ու իրանց անունն «աշխարհով մին կը լինի»:

Յունիս ամիսն էր. գիւղական կենքերի ամե- նաեւուն ժամանակը. ընտրութիւնն այդ ժամանակ հրաշալի է գիւղում. դեռ արև չը ծագած՝ գիւ- ղացիները դաշտն են գնում, երեկոյան արևը մայր մոնելուց յետոյ խումբ-խումբ վերադառ- նում երգելու ու դուարճանալով: Հեռուից լու- վում են հողի սրբալի քաղցր երեկները, որոնք մեղծ գեփիւռի շնորհիւ երբեմն մեղեդու տալա- ւորութիւն են լիոյնում, երբեմն լի ձայնով ճնն- չում, իսկ երբեմն էլ կորչում օդի անհունութեան մէջ: Նրբ նախիրը մօտենում է գիւղին, հորթե- րի ու տաւարի բաւալը իրար են խառնվում և ամեն մի գիւղացու բաւալում լսվում է կիծելու թշնջոյն ու որոճալու ձայնը: Գիւղացին, թէ և աշխատութիւնը ծանր՝ բայց և այնպէս ուրախ է. տարին պոզաբեր է և ամեն բան առատ թէ իրան և թէ կենդանիների համար:

Կէսօրվայ շորը նրա էր անցել, երբ Ալանը ըստ սովորութեան գնաց Ք... գիւղը, Սօնայի հետ տեսնվելու: Մերունի Կարապետը դաշ- տում էր: Երկու սիրահարները այդին շրջելով՝ դուրս եկան անտառի կողքը և նստեցին մի ստուերախիտ տեղ, որտեղ արևի ճառագայթ- ները հալի: Էին թափանցում: Այ մի արարած չէր երեւում. ամենքն իրանց գործին էին. լուս- թիւնը խանդավառ էր միայն միջատների սու- լոցով: Ալանը իրան բաղդաւոր էր գզում. նա մենակ չէր, ինչպէս առաջ. նա ունէր մի այն- պիսի ընկեր, որին չէր փոխ ամբողջ աշխարհի գեղեցկութիւնների հետ, ինչպէս նա սովոր էր ա- սելու ուրիշների մօտ: Այդ երազական ցնորք- ների մէջ յանկարծ նա դիմեց Սօնային: —Սօնա, ինձ շատ ես սիրում: —Միթէ կայ մէկը, որին քեզանից աւելի

կուղիների շարքերը: Այդ արեւահեղ, յամառ և երկարատև կուղի, որի մէջ երկու կողմերն էլ աշխատում էին միմեանց գերազանցել հերո- սութեամբ և տոկոսութեամբ, նոյնպէս նիւթ ժառակարարեց երիտասարդ գրողին և նրա Սե- աստոպոլեան պատմութեանը նոյնպէս մեծ տպաւորութիւն գործեցին: Պատերազմից յետոյ նա Պետերբուրգ գնաց և որպէս ջահէլ ղինուո- րական՝ շարունակում էր դուարճաւոր կենսա- վարել: Բայց նա արդէն մեծ անուն էր հանել և այն ժամանակվայ գրողների շրջանում համակրանք ևս էր վայելում: Վաթնական թվականներին Տօլստոյ սկսեց իր «Նշակաւոր «Պատերազմ և Խա- ղաղովութիւն» (Война и Миръ)» մեծ վէպը, որի նիւթը առնված է Նապօլեօնի պատերազմներից: Այդ հանճարեղ գործը համաշխարհային հոգակ տվեց Տօլստոյին: Բազմաթիւ գրուածքներ նը- վրվեցան այդ վէպին, որոնք ընդուն էին նրան պատերազմական, փիլիսոփայական, գեղարու- եստական տեսակետից: Տօլստոյին նամակներից երևում է, որ «Պատերազմ և Խաղաղութիւն» նա գրել է մեծ յափշտակութեամբ, գրել է նրա մէջ իր ամբողջ հոգին՝ հինգ տարի ամենայն սրով և յօժարութեամբ աշխատելով նրա վրա ու նիւթեր հաւաքելով:

ԱՆԴԻԺԱՆԻ ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸ

Պուրքեստանի ընդհանուր նահանգապետ գե- ներալ Գուստօվսկոյ տպել է «Туркестанскія Вѣдо- МОСТЫ» լրագրում հետեւեալ պաշտօնական յայ- տարարութիւնը.

«Ուսուց բանակի վրա գործած ամօթալի յարձակման մասնակցողներից նրանք, որոնք կաշնաւորված են, բաժանված էին ութ խմբե- րի: Ուսուց և տեղական իշխանութիւնները կա- լանաւորել և քննութեան իշխանութիւնները 546 մարդ: Դրանցից քննութեան միջոցին արձակ- ված են 131 հոգի, դատի են ենթարկված 415 հոգի: Ձինուրական դատարանը, քննելով ամեն մէկի յանցապարտութիւնը առանձին-առանձին, բոլորովին արդարացի 32 մարդկանց: Մնա- ցած 383 մեղապարտներին դատարանը դատա- պարտեց՝ 8-ին — բանտարկութեան և ուղղիչ ապաստանարանների մէջ կաշնաւորման, իսկ մնացած 380-ին—կաշնադանի: Բայց դատա- րանի և տեղական իշխանութիւնների միջ- նորդութեամբ թագաւոր Կայսրը բարեհաճեց կենսա շնորհել 362 մեղապարտներին (18 հոգի կաշնադանի են հանված) փոխարինելով մահվան դատաւճիւր տաժանակիր աշխատանքների դա- տապարտմամբ:

3-ին՝ առանց ժամանակի 147-ին՝ 20 տարով

սիրեմ:

—Բա որ սիրում ես, ինչու անցնող օրը ինձ վրա բարկացաւ:

—Որովհետեւ դու անկարելի բան էիր պահա- նում. երևի դու էլ այն կարծեքին ես, թէ ան- մայր մեծացած աղջիկ է, անխրատ կը լինի:

—Է՛հ, չէ, ասաց Ալանը կասկածոտ հայեացք գցելով, ասում են՝ դու Սարգսին ես աւելի սիրում:

—Սուտ է, բացականչեց Սօնան. ես նրան ոչ թէ սիրում, այլ ատելով ատում եմ:

—Նրեւում է, ասաց հեղօրէն Ալանը:

—Բաւական է, ասաց Սօնան արտասուքը խեղդելով. ի հարկէ, ինձ պէս մի որդ գեղջ- կուհին քեզ պէս մի բէկդաղից աւելին չը պէտք է սպասէ: Նա հեկեկում էր:

Ալանը չը գիմացաւ. նա գրկեց Սօնային և աշխատեց մխիթարել ու համոզել նրան, որ ուշը չը դարձնէ իր ասածներին, որ աշխարհ- հում միայն նրան է սիրում: Այդ միջոցին նրանց շրթնաքնները միացան. նրանք գրկա- խառնվեցին...

Արեգակը թափնվեց սև ամպերի տակ, սկսվեց Գարաբաղի փոթորիկը: Որոտաց: Սօնան դու- ղաց ու վեր թռաւ տեղից. նա այժմ միայն զգաց, թէ ինչ է պատահել... Քամին մռնչում էր, ծառերի կատարները դետնին էին դիպչում ու էլ յետ բարձրանում: Երկրում ամպերը պա- տերազմ էին սկսում. ձայնում էր կայծակը, եր- կինքն ու գետին դողդաղեցան: Անձրեկ մեծ- մեծ կաթիլները թափվում էին ծառերի տերե- ններից: Սօնան շտապով քայլերն ուղղեց դէպի գիւղը: Ալանը գնում էր նրա ետեւից գլխիկը ու լուս: Այդ միջոցին լսվեց ազգուսի չաբա- դուշակ՝ զղւն, զղւն...: Սօնան դողաց. կարծես այդ անկեղու թռչունն էլ իր խուպոտ ձայնով կանչում էր նրա ետեւից՝ «Կորա՛ր, կորա՛ր...»:

Ալանն առանց սպասելու փոթորիկի վերջա- նալուն, շտապեց տուն. նա տխուր էր ու մը- տայոյգ:

(Կը շարունակվի)

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13